

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակա- տարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղումը
1	2	3	4	5	6	7	8
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն							
1.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի N 587-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը վերապահված քաղաքականության արդյունավետ իրականացում՝ պարբերաբար կատարելագործվող միջազգային չափորոշիչներին համապատասխան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն		փետրվարի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.3-րդ ենթակետի չորրորդ պարբերություն
2.	«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հանրապետության մարզադպրոցների, մարզական քոլեջների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ մարզական հասարակական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդում, ժամանակակից մարզագույքով և մարզասարքերով ապահովում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն		փետրվարի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.3-րդ ենթակետի յոթերորդ պարբերություն

1	2	3	4	5	6	7	8
3.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի N 1428-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պայմանների նվազագույն չափորոշիչների հստակեցում, նոր դրույթների ընդգրկում իրավական դաշտ	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	մարտի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.3-րդ ենթակետի յոթերորդ պարբերություն
4.	«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի ու հավելավճարների վճարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի սոցիալական վիճակի բարելավում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ապրիլի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.3-րդ ենթակետի յոթերորդ պարբերություն
5.	«Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	երիտասարդական աշխատանքի խթանում, երիտասարդական աշխատողի կարողությունների, հմտությունների զարգացում, որակավորման բարձրացում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն		հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.2-րդ ենթակետի երրորդ և հինգերորդ պարբերություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ